ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ
Առարկան՝ Անգլերեն
Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Սողոմոնյան
Ուսումնական հաստատություն՝ Անտոն Չեխովի անվ հ.55 դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

1. **Արժեք եզրույթը, սահմանումները----------5**
2. ***Համամարդկային արժեքները, դրանց տեսակները*** **----------8**
3. **Բարոյական արժեքներ----------17**

Եզրակացություններ----------19

Օգտագործված գրականության ցանկ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականությունը և կարևորությունը. Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորում է գիտելիք, վերաբերմունք, հմտություններ որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու կամ այլընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով արժեքը մարդու համար, իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշն է, որի կարևոր կատեգերիաներից են՝ հավատն ու սերը: Ժամանակակից կյանքում մշակութային քաղաքական սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են մաև անձի արժեքները, աշխարհընկալումները, ինչպես նաև աշխարհի, մարդկանց բնության հետ հարաբերությունները:

Սույն թեմայի *արդիականությունը* պայմանավորված է նրանով, որ այժմյան հասարակությունում ավելի արդիական են դառնում մարդու արժեքային կողմնորոշումները,մարդ-հասարակություն փոխհարաբերությունները հասկանալու և վերլուծելու միտումը, արժեքների տեղը և դերը՝ որպես անձի ինքնություն բաղադրիչներ դիտարկելը: Հասարակությունում առկա արժեքները և նորմերը ձևավորվում են տարիների պատմական և մշակութային զարգացման ընթացքում,ինչն էլ վկայում է այն մասին,որ արժեքների ձևավուրումը մշակույթի ազդեցությունն անմիջականորեն իր վրա կրող գորցընթաց է: Խնդիրն արդիական է հատկապես հայկական հայ հասարակության տեսանկյունից:

Անցումային հասարակությունը փորձաքար է յուրաքանչյուր ազգային ինքնության համար: Այն բացահայտում է արժեքների այն ամբողջությունը, որով տվյալ համակեցությունը փորձում է ինքնահաստատվել կենսական նոր հանգամանքներում: Ազատ շուկայական հարաբերություններ և քաղաքացիական հասարակություն ստեղծելով արդիականանալու հայկական սոցիոմշակութային դաշտը ևս փորձարկվողի վիճակում է: Նոր մարտահրավերներին մեր արձագանքի ազգային առանձնահատկությունները հստակ դրսևորվում են անհատական կեցության և ընդհանրական շահերի փոխհարաբերության բնույթով: Ցավոք սրտի, մեր մեջ դեռևս ամրակայված չէ պետականության շահի գերակայության գիտակցումը: Դա հստակ արտահայտվում է ընտանիքը, հոգևոր արժեքները, հոգևորականությանը, պետական կառավարման ինստիտուտները և այլ արժեքներ իմաստավորելու հայկական

ավանդույթի մեջ: Ինչպես սոցիլական ու տնտեսական, հասարակական ու քաղաքական համակարգի մյուս ոլորտներում, հասարակական արժեհամակարգի:

Աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել բարոյական արժեքները:

Աշխատանքի ***խնդիրներն են.***

- Ուսումնասիրել արժեք հասկացությունը
- Ներկայացնել համամարդկային արժեքները
- Քննել բարոյական արժեքները և դրանց սահմանները:

1.Արժեք եզրույթը, սահմանումները

Աքսիոլոգիան փիլիսոփայական դիսցիպլին է, որն ուսումնասիրում է արժեքների կատեգորիան որպես մարդկային գոյության իմաստային հիմքեր՝ սահմանելով մարդկային կյանքի ուղղությունն ու շարժառիթը: Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի աքսիոլոգիայի՝ որպես փիլիսոփայական առանձին ուղղության մի քանի տասնյակ սահմանումներ: Կարծում ենք փիլիսոփայական այս ուղղության ամբողջացնող սահմանումը հետևյալն է. աքսիոլոգիան ուսումնասիրում է արժեքային աշխարհի բնութագրերը, կառուցվածքներն ու նրա ճանաչման ուղիներն ու գոյաբանական կարգավիճակը, ինչպես նաև արժեքային դատողությունների բնույթն ու առանձնահատկությունները[1]: Աքսիոլոգիայի՝ որպես փիլիսոփայական նոր՝ արժեքներ ուսումնասիրող, կատեգորիայի, ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Ռ. Լոտցեն, Ն. Հարթմանը, Գ. Ռիկերտը, Վ. Վինդելբանդը և այլք:

Արժեքաբանությունը (աքսիոլոգիա) առնչվում է բարոյագիտության, սոցիալական փիլիսոփայության, կրոնի և քաղաքականության բոլոր այն բնագավառների հետ, որոնք գնահատող դատողությունների հետ գործ ունեն[2]:

Աքսիոլոգիան արժեքը սահմանում է որպես առարկայի իմաստ (կամ դրա նշանակությունը), ի տարբերություն դրա գոյության: Արժեքները լինում են.

- նյութական և հոգևոր,
- արտադրական-սպառողական,
- հասարակական-քաղաքական,
- ճանաչողական և տեղեկատվական[3]:

Աքսիոլոգիական օբյեկտիվիզմի համաձայն՝ արժեքներն անկախ են մարդուց և մարդկային հասարակությունից: Մինչդեռ աքսիոլոգիական սուբյեկտիվիզմի համաձայն արժեքները մարդուց և մարդկային հասարակությունից անկախ գոյություն չունեն: Համաձայն էսսենցիալիզմի՝ կան իրողություններ, որոնք բոլոր համատեքստերում էլ արժեքավոր են, այնինչ, ըստ կոնտեքստուալիզմի՝ նման

---

[1] Schroeder M., Value Theory // Stanford Encylopedia of Philosophy, http://plato.stanford.edu/entries/value–theory/, հասանելի է:
[2] Նույն տեղում:
[3] Философия, Учебник для вузов / Под ред. проф. В.Н.Лавриненко, проф. В.П.Ратникова. – М., 2004. С. 603-614.

իրողություններ չկան: Ամեն ինչ արժեքավոր կամ անարժեք է դառնում միայն այս կամ այն կոնկրետ համատեքստում[4]:

Ընդհանուր առմամբ կարծում ենք արժեքը գնահատական է, վերաբերմունք, որը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական: Նեղ ըմբռնմամբ արժեքը իրի, առարկայի, երևույթի, արարքի, գործունեության, վարքագծի դրական նշանակությունն է: Արժեքը կենսականորեն կարևորն է, նշանակալիցը, թանկն ու հարազատը, որը հոգեմտավոր իմաստավորման է ենթարկվում մշակութային սուբյեկտի կողմից և ուղղորդում նրա վարքը որոշակի չափորոշիչների (իդեալ, նպատակ) տեսանկյունից: Այս ըմբռնմամբ արժեքը այն ամենն է, ինչը դրական նշանակություն ունի մարդու համար: Ուստի «բացասական արժեք» արտահայտությունը սխալ է և նման է «բարի-չար», «գեղեցիկ-տգեղ» բառազույգերին: Դա արժեքի հակարժեքն է, որը բացասական նշանակություն ունի: Օրինակ՝ գեղեցիկը արժեք է, տգեղը՝ հակարժեք, բարին արժեք է, չարը՝ հակարժեք, գիտելիքը արժեք է, տգիտությունը՝ հակարժեք, դաստիարակվածությունը արժեք է, անդաստիարակությունը՝ հակարժեք, և այդպես շարունակ:

Արժեքը առարկայի կամ երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա նշանակությունն ու օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից: Այն գնահատվում է ոչ միայն օբյեկտի ներքին կառուցվածքով, այլև հիմնվում է կոնկրետ գործողությունների ժամանակ նրան տրված սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք մտնում են հասարակական ոլորտի մեջ, քանի որ մարդը հետաքրքրված է, կամ ունի դրա կարիքը:

Ընդհանուր առմամբ արժեք ունի այն առարկան, իրավիճակը, հարաբերությունը և այլն, որի ձեռքբերման կամ պահպանման համար սուբյեկտը պատրաստ է որոշակի զոհողություններ կատարել: Մեքենան արժեք ունի, քանի որ մեքենայի համար սուբյեկտը պատրաստ է որոշակի զոհողություններ կատարելու, օրինակ՝ իր մեկ տարվա ողջ աշխատավարձը վճարել, որպեսզի այն ձեռք բերի: Երկու անձանց միջև հարաբերությունն արժեքավոր է այդ անձանց համար, եթե նրանք այդ հարաբերությունը պահպանելու համար ջանք են թափում և այլն:

Մարդկանց համար արժեք ունեցող բազում իրողություններ կան, բայց այդ իրողություններն ունեն տարբեր արժեքներ. մեքենայի

---

[4] Բալայան Ա., Փիլիսոփայություն, դասախոսությունների համառոտագրերե, երկրորդ վերամշակված հրատարակություն, Զանգակ հրատ., Ե., 2016, էջ 284:

համար մեկ ամբողջ տարվա աշխատավարձ վճարելու պատրաստակամ անձը գուցե չցանկանա մեկ ամսվա աշխատավարձը վճարել իր ամառային հանգստի համար: Բացի նրանից, որ տարբեր իրողություններ ունեն տարբեր արժեքներ, միևնույն առարկան տարբեր իրավիճակ ներումկարող է փոխել իր արժեքը: Այսինքն՝ տվյալ առարկայի արժեքը կարող է կախված լինել արտաքին հանգամանքներից: Օրինակ՝ «բանվորի արձանը» ինչպիսի գաղափարաբանություն ու արժեք էր ներկայացնում խորհրդային հասարակության համար, և ինչպես փոխեց իր դերը՝ որպես արժեք, նոր հասարակարգի ձևավորման արդյունքում:

Արժեքները գործում են որպես մարդկային համընդհանուր իդեալ, որպես վերացական գաղափար այն հատկանիշների հիման վրա, որոնք պետք է լինեն սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, որը մշակվում է հասարակության գիտակցության մեջ: Արժեքները լինում են.

- ✓ հավերժական (ճշմարտություն, գեղեցկություն, արդարություն)
- ✓ պատմական (հավասարություն, ժողովրդավարություն):

Արժեքները ներառում են կյանքը, ազատությունը, երջանկությունը, խաղաղությունը, մարդկության կյանքը, արդարության մասին գաղափարները, իրավունքներն ու պարտականությունները, ընտանեկան կապերը, ինքնապահպանման և ինքնահաստատման արժեքները, և այլն:

Արժեքները սերմանվում են մեր մեջ դաստիարակության հետ միասին: Բայց մեր դաստիարակությունը չի ավարտվում ընտանիքով: Մենք շատ բան ենք ստանում մեր ընկերների և շրջապատի մարդկանց հետ շփվելիս: Առավել մեծ ազդեցություն կարող է թողնել մի անձ, որին բոլորից շատ ես հարգում և դա անպայման չէ, որ լինի ընտանիքի անդամ:

«Արժեք» տերմինը աքսիոլոգիայում ներառում է ինչպես բնական աշխարհի օբյեկտները, այնպես էլ նյութական և հոգևոր մշակույթը, օրինակ՝ սոցիալական իդեալները, գիտելիքները, արվեստի նկատմամբ վերաբերմունքը, վարքագծի ձևերը, գեղեցկության ու ճշմարտության ըմբռնումը և այլն: Արդեն հին ժամանակներում տեսաբանները որպես հիմնական արժեքներ ներկայացնում էին հետևյալ եռյակը.

- Բարոյականությունը,
- Գեղեցկությունը,
- Ճշմարտությունը

Ժամանակակից ամերիկյան մշակույթի հիմնական արժեքներն են՝

- Անձնական հաջողություն,
- Ակտիվություն և աշխատասիրություն,
- Արդյունավետություն և օգտակարություն,
- Առաջընթաց,
- Իրերը՝ որպես բարեկեցության նշան,
- Հարգանք գիտության նկատմամբ[5]:

Ըստ Սմելցերի՝ արժեքները ընդհանուր առմամբ ընդունված համոզմունքներ են այն նպատակների մասին, որոնց պետք է ձգտի մարդը[6]: Արժեքները կազմում են մարդու բարոյական սկզբունքների հիմքը, տարբեր մշակույթները կարող են նախապատվություն տալ տարբեր արժեքների (հերոսություն ռազմի դաշտում, գեղարվեստական ստեղծագործականություն, ասկետիզմ), և յուրաքանչյուր հասարակական կարգ սահմանում է, թե ինչն է արժեք և ինչը՝ ոչ:

2. Համամարդկային արժեքները, դրանց տեսակները

Աքսիոլոգիական բաժանումների համաձայն, ընդհանուր առմամբ գոյություն ունեն արժեքների հետևյալ տեսակները.

- նյութական (օրինակ, կենսաբանական կարիքներ, տնտեսական բարեկեցություն, ֆիզիկական անվտանգություն);
- ոչ նյութական (արժանապատվություն, հեղինակություն, բարոյական կատարելություն);
- անհատական և խմբակային;
- հիմնական (հիմնական, կենտրոնական) և երկրորդական (ծայրամասային, եզրային);
- գլոբալ և տեղական;
- հասարակական (ընդհանուր սոցիալական) արժեքներ, որոնք կապված են հասարակական կյանքի որոշակի ոլորտի հետ (օրինակ, կրոնական արժեքներ);
- փոխկապակցված արժեքները (ժողովրդավարություն և ազատություն) և

[5] Хрусталев Ю.М. Философия. – М., 2004. С. 310-331.
[6] Նույն տեղում, էջ 322:

ժխտողական (արևմտականություն և եվրասիականություն)[7]:

Գոյություն ունեն արդյոք համամարդկային արժեքներ: Աքսիոլոգիան այս հարցին միանշանակ պատասխան չի տալիս:

Հրեա սոցիոլոգ Ծ. Ծվարցը առանձնացնում է տասը հիմնական արժեքներ, որոնք ճանաչված են բոլոր մշակույթներում: Այս առումով, նրա տեսանկյունից, դրանք կարելի է անվանել համընդհանուր, քանի որ բավարարում են մարդու գոյության երեք հիմնական տեսակի կարիքները.

- կենսաբանական կարիքներ (օրինակ, սերունդ);
- սոցիալական կարիքները (օրինակ, ազնվություն, հավասարություն);
- համայնքային կարիքները - արդյունավետ գործունեության և գոյատևման (օրինակ՝ ազգային անվտանգություն, համաշխարհային խաղաղություն)[8]:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք համաշխարհային արժեքը նորմերի կամ վարքագծի օրինաչափությունների խումբ է, որն օգնում է ներդաշնակեցնել մարդկանց համակեցությունը տվյալ պահին: Սրանք որակներ կամ գծեր են, որոնք սոցիալական խումբը համարում է դրական, բայց կարող է տարածված լինել տարբեր մշակույթներում: Համընդհանուր արժեքների օրինակներ են ազնվությունը, համերաշխությունը կամ հանդուրժողականությունը: Այս արժեքները նպաստում են մարդկանց միջև ավելի առողջ գոյակցությանը և փոխանցվում են ընտանիքից և դպրոցից, թեև վերջին տարիներին լրատվամիջոցները (և հատկապես սոցիալական ցանցերը) անժխտելի դեր են խաղացել դրանց տարածման գործում:

Համամարդկային արժեքային համակարգի կարգավորման համար իրավական-կանոնակարգող հիմք են հանդիսանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպական խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և կառույցների կողմից ներկայացվող միջազգային համաձայնագրերն ու օրենսդրական ակտերը, որոնք ձևավորում և կազմակերպում, կարգավորում են համաշխարհային, միջազգային

---

7 Баранов Н., Лекция 3. Универсальные ценности в мировой политике, https://nicbar.ru/politology/study/kurs-rossiya-v-globalnoj-politike/135-lektsiya-6-universalnye-tsennosti-v-mirovoj-politike, հասանելի է:

8 Баранов Н., նույն տեղում:

կրթական տարածքը: Թվարկված կառույցները փորձում են տարածաշրջաններում ինտեգրացիոն եզրեր գտնել, անհրաժեշտ պայմաններ ստեղծել տարբեր երկրների, ժողովուրդների կրթական, մշակութային և համագործակցության համար: Այս մակարդակում որպես գերակայող, բացարձակ արժեք դիտարկվում են «մարդն» ու «կրթությունը»: Կարևորվում են մարդու իրավունքներն ու ազատությունը, հանդուրժողականությունը, անվտանգությունը:

Ամենագլխավոր արժեքներից մեկը ***գիտելիքն է:*** Գիտելիքի ձևավորման աղբյուրը ընթերցանությունն է, շփումը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, նախորդ սերունդների կողմից կուտակված սոցիալական փորձի յուրացումը, սեփական կենսափորձի իմաստավորումը, արդյունքում՝ ինքնահասունացումը, ինքնահաստատումը, ինքնահայեցողությունը՝ ռեֆլեքսիան:

Գիտելիքի երկու ըմբռնում գոյություն ունի՝ լայն և նեղ.

- ✓ լայն իմաստով ըմբռնված գիտելիքը տեղեկատվությունն է շրջապատի, բնության, մարդկային հարաբերությունների, առհասարակ՝ իմացության օբյեկտի մասին, որը հոգևոր գործունեության ձևերում (գիտություն, փիլիսոփայություն, արվեստ և այլն) կարող է դառնալ ուսումնասիրության առարկա;
- ✓ նեղ իմաստով ըմբռնված գիտելիքը հիմնավորված, հավաստի և անսխալ կարծիքն է, որը համապատասխանում է իրերի իրական վիճակին և ունի հիմնավորվածություն[9]:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային, անընդհատ ու բազմաթիվ փոփոխությունների ֆոնին գիտելիքը, կարծում ենք համամարդկային կարևորություն ունեցող արժեք է:

Հանդուրժողականություն

<<Ես բոլորովին չեմ կիսում ձեր կարծիքը, բայց կյանքս կտամ հանուն այն բանի, որ դուք այն արտահայտելու հնարավորությունն ունենաք>>: Ֆ. Վոլտեր

Հանդուրժողությունը նշանակում է մեզ շրջապատող աշխարհի մշակութային բազմազանության և մարդկային անհատականության արտահայտչաձևերի տարբերության ըմբռնում և ընդունում: Դրան նպաստում են գիտելիքները,

[9] Սարգսյան Ա., գիտելիքը՝ որպես արժեք, http://kargavorum.nkr.am/static/3288, հասանելի է:

լայնախոհությունը, շփումը, մտքի, համոզմունքների, խղճի ազատությունը: Ժողովրդավարական հասարակարգում ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում մարդկանց անհատական դրսևորման համար: Սա նշանակում է, որ մարդկանց տարբերություններն ավելի ակնհայտ են դառնում: Մյուս կողմից՝ տարբեր երկրների և մշակույթների շփումների ինտենսիվացումը, մարդկանց միգրացիայի աճը, համաշխարհայնացման արդյունքում ինտեգրման միտումները առավել կարևոր են դարձնում հանդուրժողականության գաղափարը: Հանդուրժողականության դրսևորման տարբեր մակարդակներ կան՝

- ✓ Անձնական- արտացոլվում է բարոյականության, բարքերի,
- ✓ Հասարակական- հոգեբանության և գիտակցության մեջ,
- ✓ Պետական –օրենսդրության և քաղաքականության մեջ:

Պետական մակարդակում հանդուրժողականությունը պահանջում է արդարացի և անկողմնակալ օրենսդրություն, իրավակարգի պահպանում վարչական և դատական գործընթացներում: Հանդուրժողականությունը նաև պահանջում է առանց որևէ խտրականության իրավունքներ ապահովել մարդու սոցիալական և տնտեսական զարգացման համար: Շատ կարոր է այն հարցը՝ հանդուրժողականությունը սահման ունի՞, թե ոչ: Այսինքն արդյո՞ք կարելի է ամեն ինչ հանդուրժել: Իհարկե ոչ: Հանդուրժողականության սահմանը որոշվում է օրենքներով: Այսինքն՝ պետք է հանդուրժել այն, ինչ օրենքով թույլատրելի է, ինչը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների շրջանակներում է: Փոխարենը անհանդուրժելի են այդ իրավունքների և ազատությունների ոտնահարումները:

- Անհանդուրժողականության դրսևորումներն են.
- Վիրավորանքը, ծաղրը, անտեսումը, արհամարհանքը,
- Բացասական կարծրատիպերը, նախապաշարմունքը ,
- Կանխակալությունը,
- Էթնոցենտրիզմը,
- Հետապնդումը, սպառնալիքները, արտաքսումը,
- Մարդու իրավունքների մերժումը,
- Խտրականությունը, մեկուսացումը,
- Մարդու շահագործումը,
- Ռասիզմը, քսենոֆոբիան, էթնոֆոբիան,
- Ֆաշիզմը,

- Իմպերիալիզմը,
- Կրոնական, մշակութային խորհրդանիշների պղծումը,
- Դավանանքի հետապնդումը կամ դավանանքի պարտադրումը,
- Ապարտեիդը, ոչնչացումը, ցեղասպանությունը:

Անհանդուրժողությունը կանխարգելող ամենաարդյունավետ միջոցը դաստիարակությունն է: Դաստիարակությունը սկսվում է մարդկանց կրթելուց, նրանց՝ իրենց իրավունքների և ազատությունների մասին տեղեկացնելու միջոցով, ինչը կապահովի այդ իրավունքների իրագործումը և կամրապնդի այլ մարդկանց իրավունքների պաշտպանության ձգտումը: Դաստիարակությունը հանդուրժողության ոգով պետք է ուղղված լինի ընդդեմ այն ազդեցությունների, որոնք հանգեցնում են այլ մարդկանց հանդեպ վախի և օտարման զգացողության և պետք է օգնի երիտասարդների մոտ բարոյաէթիկական արժեքների վրա հիմնված անկախ մտածողության և քննադատական գիտակցականության ձևավորմանը:

<u>Արդարություն</u> գաղափարը նույնքան հին է, որքան մարդկությունը:Մարդկությունը դարեր ի վեր խորհել է այն հարցի շուրջ, թե ինչ է արդարությունը և թե ինչպես հետևել դրան: Արդարություն եզրույթը տարբեր կերպ է ընկալվում սոցիալական ու հասարակական տարբեր շերտերի մոտ: Աղքատի ու հարուստի, կնոջ և տղամարդու, իշխողի և իշխվողի համար դրանք տարբեր իմաստներ ունեն: Հասարակության զարգացումը իր հետ բերում է արդարության հետ առնչվող նորանոր խնդիրներ: Այնպես որ կատարյալ արդարությունը դեռևս անհասանելի է: Կյանքում բոլորս էլ, իսկ ղեկավարները՝ առավել հաճախ, ստիպված ենք լինում <<դատավորի>> դեր կատարել, կշռադատել և գնահատել իրավիճակը, փաստարկել, թե ինչն է սխալ, ինչը՝ ճիշտ, ով է արդար, ով՝ մեղավոր: Արդարության գլխավոր արժեքը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր կողմ ստանա այն, ինչին ձգտում է:

Արդարությունը հասարակության կողմից պաշտպանության առարկա է, և արդարացի է այն հասարակությունը, որտեղ ստեղծվել ու գործում են արդարությունը ապահովող և պաշտպանող հաստատություններ: Արդարությունը պահպանվում է նախևառաջ բարոյականությամբ՝ խղճով: Սակայն մարդկությունը դեռևս չի կարողանում միայն բարոյականության միջոցով պահպանել արդարությունը և դրա համար ստեղծված են իրավական միջոցներ, որոնք հանդես են գալիս այն ժամանակ, երբ բարոյական նորմենրն ի վիճակի չեն կանխել անարդարությունը: Արդարության պահպանման և վերականգնման համար պետությունը ստեղծում է

արդարադատության համակարգ, որի միջոցով վերականգնվում են խախտված իրավունքները և լուծվում վիճելի հարցերը: Սակայն կարևորն այն է, որ և ընտանիքում, և դպրոցում, և այլուր մենք բոլորս սպասում ենք արդար վերաբերմունքի: Սա նշանակում է, որ արդարությունը, լինի դա գիտակցված, թե ոչ, հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների հիմք և համընդհանուր արժեք:

Բացի այս համընդհանուր արժեք կարող են լինել նաև *նյութական ու հոգևոր մշակութային կոթողները*, արժեքավոր կառույցները:

Մշակութային արժեք հասկացության մեջ ևս կարևոր, եթե ոչ առաջատար դեր ունի հասարակության վերաբերմունքը օբյեկտներին, որոնք ճանաչվում են որպես լոկալ կամ համամարդկային մշակութային արժեքներ:

Ազգի կենսագործունեությունը պայմանավորող վճռորոշ գործոնները հանդիսանում են արժեքները: Ազգի արժեհամակարգ հանդիսանում են այն համակեցության կանոնները, որոնք արտահայտում են ներքին և արտաքին ապրելակերպը: Դրանք հանդիսանում են ազգի ներքին կառուցվածքի՝ էթնոհոգեբանության արտաքին պրոյեկցիան: Հենց հոգևոր արժեքներն են տարբերակում էթնոսի խմբի անդամներին տարբեր ազգի ներկայացուցիչներից: Ազգային արժեհամակարգը տվյալ ազգին դարձնում է ինքնատիպ, առանձնահատուկ մյուս ազգերի նկատմամբ: Դրանք օգնում են իրատեսորեն բացահայտել ազգի պոտենցիալը:

<u>Ազգային արժեքներ</u>

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում:

Լիարժեք էթնոկրի անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով: Այս տեսանկյունից 21-րդ դարն էլ

բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտերը, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց հետևանքները՝ ազգային արժեքների վերաարժևորման ու նորերի կերտման գործում:

Հայը դարեր շարունակ ապրելով առանց պետականության կարողացել է համախմբվել ինչ-ինչ անհատների շուրջ, որոնց արժեքներն ու կերպարները սերնդեսերունդ փոխանցվել են, հարմարեցվել պատմական տվյալ ժամանակաշրջանին ու սերունդների միավորման, հայրենասիրական դաստիարակության հիմքը դարձել: Հայկ Նահապետ, Վարդան Մամիկոնյան, Գևորգ Մարզպետունի, Դավիթ Բեկ, Անդրանիկ ու Նժդեհ… դարեր շարունակ հենց այս կերպարների շուրջ է համախմբվել հայ ժողովուրդը: Դրանք, անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կարլ Յունգի բնորաշմամբ, այն արքետիպերն են, որոնք անհատի կամքից անկախ, դրսևորվում են միֆերում, մղձավանջներում, կրոնական զրույցներում, երազներում և, իհարկե, արվեստում: Դրանք ունեն համախմբող, միավորող, նշանակություն, եթե դրական ապրումների ու զգացողությունների հիմք են: Ցանկացած արքետիպ, ի վերջո, դրական կամ բացասական որևէ ապրումի, զգացողության արդյունք է, երբեմն նաև՝ պատճառ10: Անկախության տարիներին, պայմանավորված սեփական հայրենիքի սահմանների ու անձնական անվտանգության կարևորության գիտակցումով, մեզ համար կարևոր արժեք դարձավ բանակը՝ որպես կոլեկտիվ անվտանգության գրավական: 2016 թ. պետական մակարդակով ներդրվեց ազգ-բանակ հայեցակարգը՝ որպես հայ ժողովրդի արժեհամակրգի ձևավորման նորօրյա գործիք:

Յուրաքանչյուր ազգի համար կարևոր արժեքներ են պետական խորհրդանիշները: Հայկական միջավայրի համար հատկանշական է հետևյալ 3 արժեքները.

- մշակույթ
- կրոն
- գիտություն և կրթություն
- Մշակույթի բաղադրատարրերն են՝ լեզուն, ընտանիքը, պարը, երգը:

Անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման

[10] Юнг К. Психология бессознательного. М.: «Издательство АСТ», 2001, стр. 98-101.

գործում: Այս տեսանկյունից մեր հասարակության համար ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտներից առաջնայինը, ինքնին կարևոր արեք է: Վերջինս այն հենայունն է, որ ապահովում է մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Ինչպես նշում է գերմանացի գիտնական Դյուրկհեյմը, «սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է»[11], որով ոչ միայն ձևավորվում ու զարգանում է նոր սերունդը, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը[12]:

Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ներընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին՝ նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում[13]: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին:

Հասարակությունն ի վիճակի է դնելու և լուծելու լայնածավալ ազգային խնդիրներ, երբ ունի բարոյական ուղենիշների ընդհանուր համակարգ: Եվ կան այդ ուղենիշները, որոնք հարգանք են պահում մայրենի լեզվի, ազգային մշակույթի և մշակութային ինքնատիպ արժեքների, նախնիների հիշատակի, սեփական պատմության յուրաքանչյուր էջի նկատմամբ:

Կրթությունը առանցքային դեր է խաղում հասարակության բարոյական և հայրենասիրական համախմբման գործում: Դպրոցը միակ սոցիալական ինստիտուտն է, որով անցնում են Հայաստանի բոլոր քաղաքացիները: Անձնական արժեքները,

---

[11] a study in sociology, https://archive.org/details/suicide0000unse_x5o7 հասանելի է:
[12] Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Ե., 2003, էջ 29:
[13] Налчаджян А. А., Основы этнопсихологии, Е., 2003, с. 179.

իհարկե, առաջին հերթին ձևավորվում են ընտանիքում: Բայց անհատի ամենասիստեմատիկ, հետևողական ու խորապես բարոյահայրենասիրական զարգացումն ու դաստիարակությունը տեղի է ունենում կրթության ոլորտում: Ուստի դպրոցում է, որ պետք է կենտրոնացվի աշակերտի ոչ միայն մտավոր, այլև հոգևոր, մշակութային կյանքը:

Դպրոցական տարիքի երեխան, հատկապես տարրական դպրոցում, առավել ենթակա է զարգացման և դաստիարակության, սակայն այս զարգացման և դաստիարակության թերությունները դժվար է լրացնել հետագա տարիներին: Մանուկ հասակում սովորածը բնութագրվում է հոգեբանական մեծ կայունությամբ: Ուստի որոշակի արժեքների կրող անհատի ձևավորման գործում հույժ կարևոր դեր ու նշանակություն ունի նաև դպրոցը՝ որպես ողջ հայ հասարակության կյանքում կարևոր դեր կատարող սոցիալական ինստիտուտ: Հեևաբար, կարծում ենք, կրթությունը պետք է ուղղված լինի որոշակի իդեալի հասնելուն:

Հստակ է մի բան, որ ոչ մի ազգություն կամ ազգ չի կարող ապրել ու զարգանալ առանձին՝ համաշխարհային քաղաքակրթությունից մեկուսացված՝ հիմնվելով միայն սեփական գիտության, մշակույթի և պատմության վրա: Նրա ազգային գաղափարը չի կարող ձևավորվել ու զարգանալ առանց այլ ազգերի արժեքների, ձեռքբերումների կիրառման, առանց ստեղծագործ ու քննադատական վերլուծության: Ուստի ցանկացած ժողովրդի, ցանկացած ազգի գաղափարական զարգացման գործընթացը չի սահմանափակվում սեփական ձեռքբերումներով, այլ նա ակտիվորեն օգտագործում է այլ ազգերի բացահայտումներն ու ձեռքբերումները: Ժողովրդի մեծությունը դրսևորվում է ոչ թե այլ ժողովուրդներից և ազգություններից պաշտպանվելու, այլ սեփական ազգային գաղափարախոսության մեջ համամարդկային, միջազգային արժեքների արտացոլման, ստեղծագործաբար յուրացված գաղափարական նվաճումների, առաջադեմ մտքերի, այլ ժողովուրդների օրենքների և կանոնների ընդունման մեջ: Համամարդկային ցանկացած արժեք, որն անհամատեղելի է ազգային ինքնության, պատմական ավանդույթների, հոգևոր կարիքների հետ, չի կարող բռնի ուժով ներմուծվել: Մարդկանց գիտակցության մեջ նոր հոգևոր արժեքների ներդրման համար անհրաժեշտ է հասարակության մեջ ձևավորել այդ արժեքների անհրաժեշտությունը և դրանում առաջնային է դաստիարակության ու կրթության դերը:

3. Բարոյական արժեքներ.

Բարոյականությունը սոցիալական գիտակցության ձև է, որը պարունակում է ոչ ֆորմալ սոցիալական նորմեր. հանդես է գալիս որպես սոցիալական հարաբերությունների կարգավորող: Յուրաքանչյուր մարդ իր վարքագիծը բարոյականության տեսակետից խորը գնահատում է՝ որքանո՞վ է դա իրեն համապատասխանում, որքանո՞վ է բարոյական: Բարոյական արժեքները, հետևաբար, սոցիալական վարքագծի հրամայականներ են, որոնք ունեն ոչ պաշտոնական բնույթ և ծառայում են որպես անհատի վարքագծի ուղեցույց: Այդ իսկ պատճառով դրանք կոչվում են արժեքներ, քանի որ առանց դրանց հնարավոր չէ գնահատել շրջապատող սոցիալական իրականությունը:

Հասարակության մեջ բարոյական արժեքները ներառում են բոլոր հոգևոր արժեքները, հոգևոր մշակույթը: Կրոնը, կրոնական աշխարհայացքը բարոյական արժեքների աղբյուրն է և կազմում է հասարակության հոգևոր կյանքը: Բարոյականության և բարոյական արժեքների առաջացումը պայմանավորված է մարդու երկակի էությամբ: Մարդու մեջ իր գոյության ողջ ընթացքում անընդհատ պայքարում են նրա երկու էությունները՝ կենսաբանական և սոցիալական: Մարդիկ, որոնցում կենսաբանական էությունը հաղթում է, սովորաբար արժանանում են հասարակության կողմից մեկուսացման և ընկնում հետագա գոյության անհնարինության մեջ:

Դժվար է պատկերացնել մարդու գոյությունը հասարակության մեջ, եթե, օրինակ, մարդը չկարողանա սահմանափակել իրեն սննդի, սեռական բնազդների մեջ, եթե չկարողանա զսպել իր ագրեսիան այլ մարդկանց նկատմամբ:

Բարոյական արժեքներն այն առաջնորդող ուղենիշներն են, որ ուղեկցում են մարդուն ողջ կյանքում: Մենք միմյանց գնահատում ենք ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան արտաքին տվյալներով, որքան նրանով, թե ինչպիսի մարդ է:

Ըստ էության, բարոյական արժեքները տեսակետներ, զգացմունքներ, հետաքրքրություններ, գաղափարներ, մտքեր ու երևույթներ են: Յուրաքանչյուր մարդ ունի իր արժեհամակարգը և մեզանից յուրաքանչյուրը կառուցում է իր այսպես կոչված «արժեքների բուրգը», որն ամբողջությամբ արտացոլում է անհատի ներաշխարհը:

Այպիսով, կարող ենք ասել, որ բարոյական արժեքը նախորդ բաժնում քննարկված արժեքների համալիրն է, որ պայմանավորում է մարդու վարքը, գոյությունն ու հարաբերությունները սոցիալական դաշտում:

Չնայած այն հանգամանքին, որ բարոյապես անբասիր մարդ գոյություն չունի, բարոյապես իդեալական մարդու կերպարը օրինակ է, որին պետք է հետևել: Այս մարմնավորումն արտացոլված է բազմաթիվ կրոնական և գեղարվեստական պատկերներում: Բավական է հիշել Հիսուս Քրիստոսին, Դոն Կիխոտին, արքայազն Միշկինին, Իլյա Մուրոմեցին: Բարոյապես իդեալական մարդու կերպարից բացի, կան բարոյապես անբասիր հասարակության առանձնահատկություններ: Նման հասարակությունը նկարագրվել է փիլիսոփայական և գրական ուտոպիաներում (Տ. Կամպանելլա «Արևի քաղաքը», Թ. Մորի «Ուտոպիայի կղզու գիրքը» և այլ աշխատություններ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժեքաբանությունը (աքսիոլոգիա) առնչվում է բարոյագիտության, սոցիալական փիլիսոփայության, կրոնի և քաղաքականության բոլոր այն բնագավառների հետ, որոնք գնահատող դատողությունների հետ գործ ունեն; Այն արժեքը սահմանում է որպես առարկայի իմաստ (կամ դրա նշանակությունը), ի տարբերություն դրա գոյության: Արժեքները լինում են.
   - նյութական և հոգևոր,
   - արտադրական-սպառողական,
   - հասարակական-քաղաքական,
   - ճանաչողական և տեղեկատվական:
2. Որպես գիտական դիսցիպլին աքսիոլոգիան համարվում է փիլիսոփայական մյուս ուղղություններից երիտասարդը: Սակայն արժեքի մասին պատկերացումների ակունքները հասնում են Հին Հռոմ ու Հունաստան: Արժեքը որպես գոյության ձև հին աշխարհում ընկալում էին եռաստիճան համակարգով՝ արժեքավոր համարելով այն, ինչը բարոյական էր, գեղեցիկ ու ճշմարիտ:
3. Աքսիոլոգիան որպես գիտություն փորձում է արժեք հասկացության ու դրա գոյության ամբողջական նկարագիրը տալ: Աքսիոլոգիական բաժանումների համաձայն, գոյություն ունեն նյութական և ոչ նյութական, անհատական և խմբակային, հիմնական և երկրորդական, գլոբալ և տեղական, հասարակական և կրոնական արժեքներ, բայց համամարդկային արժեքներ գոյություն ունեն թե ոչ, այս գիտությունը միանշանակ չի տալիս:
4. Մի բան հստակ է, որ պատմական տարբեր ժամանակահատվածներում, կախված հասարա-քաղաքական իրողություններից ու սոցիալ – տնտեսական հարաբերությունների ձևից արժեքի մասին պատկերոացումները փոխվում են: Եվ դա միանգամայն բնականոն գործընթաց է, քանի որ որևէ իրի կամ առրակայի արժեք տվողը դրա հետ կապված գաղափարն է, որ մարդը փոխանցում է իր շրջապատին ու սերունդներիին, իսկ երբ գաղափարը կորցնում է իր արդիականությունը, այն կրող առարկան չի կարող արժեքավոր լինել:
5. Բարոյական առաքինությունները՝ մարդասիրությունը, արդարությունը, ավանդույթների պահպանումը, վարքի նորմերը, հարգանքը ծնողների ու մեծահասակների նկատմամբ առողջ բանականությունը, խելամտությունը,

իմաստնությունը, անկեղծությունը, բարյացակամությունը պարտքի զգացումը հավատարմությունը բարոյական արժեքների հիմքն են և պայմանավորում են մարդու գոյությունն ու վարքը հասարակական հարաբերություններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Ա., Փիլիսոփայություն, դասախոսությունների համառոտագրերե, երկրորդ վերամշակված հրատարակություն, Զանգակ հրատ., Ե., 2016:
2. Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Ե., 2003:
3. Налчаджян А. А., Основы этнопсихологии, Е., 2003.
4. Философия, Учебник для вузов / Под ред. проф. В.Н.Лавриненко, проф. В.П.Ратникова. – М., 2004.
5. Юнг К. Психология бессознательного. М.: «Издательство АСТ», 2001.
6. Schroeder M., Value Theory // Stanford Encylopedia of Philosophy, http://plato.stanford.edu/entries/value–theory/, հասանելի է:
7. Սարգսյան Ա., գիտելիքը՝ որպես արժեք, http://kargavorum.nkr.am/static/3288, հասանելի է:
8. Баранов Н., Лекция 3. Универсальные ценности в мировой политике, https://nicbar.ru/politology/study/kurs-rossiya-v-globalnoj-politike/135-lektsiya-6-universalnye-tsennosti-v-mirovoj-politike, հասանելի է:
9. a study in sociology, https://archive.org/details/suicide0000unse_x5o7 հասանելի է: